

ԳՍԲԷԹԻ ԽԱՉԻ ՕԾՈՒՄ ԱՆԱՊԱՏԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՌԷՆՉՕ ՄԻՐԱԺ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ուրախութեամբ կը հաղորդենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Անապատի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, Ռէնչօ Միրաժի, շինարարական աշխատանքները կը շարունակուին բնականոն կերպով եւ օրէ օր կը բարձրանայ հայկական ոճով եկեղեցւոյ կառուցումը:

Յունուար 15ին Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Բրշ. Վարդան Սրկ. Ջարգարեանի, մեկնեցաւ Ռէնչօ Միրաժ, հանդիպում ունեցաւ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գրիգոր Քինյ. Ջաքարեանի, Ծխական Խորհուրդին եւ Շինութեան Յանձնախումբին հետ: Ապա Տէր Հօր եւ Բրշ. Վարդան Սարկաւազի մասնակցութեամբ, Օծումը կատարեց եկեղեցւոյ գմբէթի խաչին, որ հանդիսաւորապէս գետեղուեցաւ գմբէթին վրայ: Այս առթիւ Սրբազան Հայրը տուաւ հոգեւոր պատգամ մը, քաջալերեց եւ գնահատեց Ծխական Խորհուրդն ու Շինութեան Յանձնախումբը եւ յոյս յայտնեց, որ եկեղեցւոյ կառուցումը կ'աւարտի ըստ ծրագրի եւ Աստուծոյ կամքով այս տարուան Հոկտեմբերին կը կատարուի օծումը:

Տեղի ունեցաւ ընթրիք, որու ընթացքին բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիկին Գարօլին Նիկոսեան: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ մօտէն կը հետաքրքրուէր եկեղեցւոյ շինութեամբ եւ իր գնահատութիւնը յայտնեց Ծխական Խորհուրդին եւ Շինութեան Յանձնախումբին, որոնք սրտանց լծուած են եկեղեցւոյ կառուցման աշխատանքներուն եւ անոնց հետ առընչուած գործերուն: Խօսք առաւ նաեւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գրիգոր Քինյ. Ջաքարեան, որ նոյնպէս երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որուն ցուցմունքներով եւ տուած ուղղութիւններով Ծուխը կը բարգաւաճէր եւ կը զօրանար:

Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ փառք տուաւ Աստուծոյ, որ շինարարութիւնը հեզասահ կերպով կը կատարուէր եւ հաւատացեալներուն միտքը պատրաստեց մօտալուտ օծման հոգեպարար արարողութեան: